ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» մարտի 2019 թվականի N: 50-ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության կողմից տրված զեկուցագիրը և ֆինանսական օգնություն տրամադրելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի 2019 թվականի մարտի 15-ի N 4 արձանագրությամբ ներկայացրած առաջարկությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով Արցախա-ադրբեջանական զինված ուժերի շփման գծում սույն թվականի մարտի 12-ին զոհված ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ (հասցեն՝ Դանիելյան փողոց, շենք 34, բնակարան 1), ժամկետային զինծառայող Կարեն Արտակի Կարապետյանի և Արցախա-ադրբեջանական զինված ուժերի շփման գծում սույն թվականի մարտի 12-ին ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ զոհված ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի բնակիչ (հասցեն՝ Տ. Ճարտարապետի փողոց, շենք 5/3, բնակարան 24), ժամկետային զինծառայող Համլետ Հրաչի Ավագյանի ընտանիքներից յուրաքանչյուրին հատկացնել 150000-ական /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ միանվագ օգնություն:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով իրականացնել վճարում:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է